ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔ ՏՅԱՆՑԶԻՆ (ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

1) Էրիկ Հարությունյան՝ ՀՀ ՊԵԿ Արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության մաքսային գործառնությունների սպասարկման թիվ 8 բաժնի պետ:
2) Ստեփան Դավթյան՝ ՀՀ ՊԵԿ Էլեկտրոնային առևտրի և օդային տրանսպորտով իրականացվող փոխադրումների վարչության ուղևորների մաքսային սպասարկման և հսկողության բաժնի պետի տեղակալ:

2" Գործուղման վայրը և ժամկետները՝

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, քաղաք Տյանցզին, Էրիկ Հարությունյան՝ հուլիսի 15-26-ը, Ստեփան Դավթյան՝ հուլիսի 16-ից օգոստոսի 1-ը:

3" Հրավիրող կողմը՝

«Tianjin TEDA Import & Export Co., Ltd.» կոնգլոմերատը:

4" Գործուղման նպատակը (աշխատանքային որ՞ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Գործուղման նպատակն էր մասնակցել «Tianjin TEDA Import & Export Co., Ltd.» կոնգլոմերատի կողմից կազմակերպվող «Ազատ առևտրի նավահանգիստներ և համապարփակ կապված գոտիներ» թեմայով դասընթացին:

5" Քննարկված թեմաները

Դասընթացի ընթացքում քննարկվել և ներկայացվել են.

- Չինաստանի ազգային իրավիճակին՝ տնտեսական, ժողովրդավարական, իրավական հարցերին առնչվող դասախոսություններ,
- Այլ երկրների հետ ապրանքների առևտրի վերաբերյալ Չինաստանի հիմնական փորձառությունը,
- Ազատ տնտեսական գոտիների զարգացման նպատակահարմարությունը, դրանց զարգացման միտումները և տնտեսության վրա դրանց ազդեցությունը,
- Չինաստանի հիմնական փորձառությունը այլ երկրների հետ ազատ առևտրի մասով բանակցելու, ներդրումային միջավայրի բարելավման նպատակով գործուն կանոններ սահմանելու վերաբերյալ դասախոսություններ,

- Միջազգային առևտրի խթանման և ինստիտուցիոնալ նորարարության ներդրման հնարավորությունները ազատ առևտրի գոտիներում թեմայով դասախոսություն
- Դասընթացի մասնակից երկրների փորձը և առկա իրավիճակը և հիմնական մարտահրավերները:

6" Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացի ընթացքում շնորհանդեսներ են ներկայացվել միջազգային բեռնափոխադրման նպատակով նավահանգստային հանգույցի գործունեության, դրա կարևորության և միջազգային առևտրի ոլորտում դրա գերակշռող դեր ունենալու վերաբերյալ, ինչպես նաև քննարկումներ են եղել մասնակից երկրների հետ նավահանգիստների շնորհիվ միջազգային առևտրի խթանման հնարավորությունների զարգացման վերաբերյալ:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացը կրելու է շարունակական բնույթ, նախատեսվում է ամեն տարի կազմակերպել քննարկումներ և փորձի փոխանակում:
Դասընթացի ընթացքում հաշվի են առնվել երկրների կողմից բարձրացված հարցերը և մասնագետների կողմից ներկայացվել են հնարավոր լուծումներ:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացին մասնակցությունն ապահովեց մասնակից երկրների հետ միջազգային առևտրի ազատականացման շրջանակներում իրականացնել փորձի փոխանակում, ձեռք բերել նոր գիտելիքներ, ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում առկա հնարավորությունները, օրակարգում ներառված հարցերի քննարկում, մասնավորապես միջազգային փորձը և միջազգային ազատ առևտրի ապագա ուղղությունները:

9" Ստորագրությունը, ամսաթիվը՝

Էրիկ Հարությունյան

Ստեփան Դավթյան

06"08"2024թ"